ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ

Հունվարի 12-ին Կրեմլում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովի նախագահությամբ տեղի ունեցավ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստ:

Նիստում քննարկվեց և հավանության արժանացավ ՍՍՀՄ տասնմեկերորդ գումարման գերագույն սովետի արտահերթ տասներկուերորդ նստաշրջանի որոշումների իրականացման հիմնական միջոցառումների պլանը: Զեկուցման մեջ, որով հանդես եկավ ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի առաջին տեղակալ Ա. Ի. Լուկյանովը, տրված էր այդ պլանի ծավալուն բնութագիրը, որն ընդգրկում է ՍՍՀՄ սահմանադրության փոփոխությունների ու լրացումների մասին օրենքի կենսագործման, ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին օրենքի, պետական շինարարության բնագավառում քաղաքական ռեֆորմի իրականացման հետագա քայլերի մասին ՍՍՀՄ Գերագույն սովետի որոշման կատարման, ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի, ՍՍՀՄ նորընտիր Գերագույն սովետի առաջին նստաշրջանի նախապատրաստման և անցկացման հետ կապված առաջնահերթ խնդիրների լայն շրջանակ:

Նախագահությունը լսեց ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ցու. Դ. Մասլյուկովի զեկուցումը ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1989 թվականի պետական պլանի և ՍՍՀՄ 1989 թվականի պետական բյուջեի նախագծերի վերաբերյալ պալատների մշտական հանձնաժողովների արած առաջարկությունների և ՍՍՀՄ Գերագույն սովետի տասնմեկերորդ նստաշրջանում այդ նախագծերի քննարկման ժամանակ դեպուտատների արած դիտողությունների իրացման ընթացքի մասին:

Ապա ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը քննարկեց ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների նախապատրաստության կապակցությամբ Ռուսաստանի Ֆեդերացիայի, Ուզբեկստանի և Մոլդավիայի ժողովրդական դեպուտատների սովետների կողմից տարվող աշխատանքի հարցը: Լսվեցին ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Վ. Ի. Վորոտնիկովի, Ուզբեկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Պ. Հաբիբուլաևի, Մոլդավական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ա. Ա. Մոկանուի հաղորդումները:

Քննարկված հարցի առթիվ ընդունվեց որոշում, որը սահմանում է ընտրական կամպանիայի ծավալման հետ կապված ժողովրդական դեպուտատների սովետների խնդիրները:

Միութենական հանրապետության՝ ի պաշտոնե ՍՍՀՄ կառավարության կազմի մեջ մտնող Մինիստրների խորհրդի նախագահի դիրքի հետ ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատի ստատուսի համատեղման հնարավորության վերաբերյալ ստացված հարցապնդումների կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը տվեց ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին ՍՍՀՄ օրենքի 11-րդ հոդվածի մեկնաբանությունը, հնարավոր համարելով միութենական հանրապետությունների մինիստրների խորհուրդների նախագահներին ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատներ ընտրելը: Այդ հարցի առթիվ նախագահության հրամանագիրը հրապարակվում է:

ՍՍՀՄ Գերագույն սովետի Միության սովետի նախագահ Ցու. Ն. Խրիստոռադնովի հաղորդման առթիվ քննարկվեց անցած տարում ՍՍՀՄ Գերագույն սովետի միջազգային կապերի հարցը և հավանություն տրվեց երկրի իշխանության բարձրագույն մարմնի միջազգային կապերի զարգացման 1989 թվականի հիմնական ուղղություններին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը քննարկեց Լեռնային Ղարաբաղում ու նրա առնչությամբ ստեղծված իրադրության հետ կապված հարցը և այդ հարցի առթիվ լսեց Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա.-Ռ. Խ. Վեզիրովի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի հաղորդումը:

Հաշվի առնելով Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի կուսակցական ու պետական մարմինների, ինչպես նաև ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի հանձնաժողովի առաջարկությունները և նպատակ ունենալով այդ ռեգիոնում կանխել ազգամիջյան հարաբերությունների հետագա սրումը և կայունացնել իրադրությունը, Գերագույն սովետի նախագահությունը, ՍՍՀՄ սահմանադրությանը համապատասխան, ընդունակահարմար գտավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հատուկ ձև՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում ինքնավար մարզի, ստատուսը: Այս հարցի վերաբերյալ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը կհրապարակվի մամուլում:

Նախագահությունը նաև քննարկեց պետական կյանքի որոշ այլ հարցեր:

(ՏԱՍՍ)